

25
SURH
YEARS



Հարգելի ընթերցող,

Քառորդ դար առաջ՝ 1997 թվականին, Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվեց անկախ կարգավորող պետական կառույցը՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Հանձնաժողովի սրբեղծման պահանջը կարծես ժամանակի հրամայականն էր՝ միտված փոփոխության համար համակարգասրեղծ համարվող էներգետիկայի բնագավառի առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը: Նորանկախ հանրապետության համար այդ վճռորոշ փուլում հանձնաժողովին էր վերապահված էներգետիկայի բնագավառում արմատական բարեփոխումների իրականացման պատասխանատվությունը: Միջազգային առաջավոր փորձն իր հերթին պահանջում էր ոլորտում կառավարման և կարգավորման գործառույթների փարանջատում՝ հիմք դնելով անկախ կարգավորման ինստիտուտի ձևավորմանն ու կայացմանը:

Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառը կարելի է համարել ոչ միայն փոփոխական, այլև սոցիալական և քաղաքական մեծ նշանակություն ու հնչեղություն ունեցող, որտեղ համակցվում են երկրի յուրաքանչյուր քաղաքացու, փոփոխվարողի և պետության շահերը: Հարաբերությունների այս հարթությունում պետական կարգավորման նպատակը նշված շահերի լավագույնս և հմտորեն հավասարակշռումն է:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վստահելի և արժանապատիվ գոյության հիմքերը դրեց հանձնաժողովի առաջին կազմը, որն ընտրված էր հանրապետության բարձրակարգ և փորձառու մասնագետներ:

րից: Նրանք իրենց ողջ մասնագիտական և կազմակերպչական ներուժը հմտորեն ներդաշնակելով նորօրյա պահանջներին և դիմագրավելով մարտահրավերներին, հեջերակաևորեն հսկայական ջանքեր գործադրեցին հանձնաժողովի և երիտասարդ հանձնաժողովականների առաջին սերնդի կայացման գործում: Անուրանալի է նաև միջազգային գործընկերների մեթոդական ու նյութական հսկայական գործուն աջակցությունը:

Արդյունքում, Հանձնաժողովն իր բարձրակարգ ու արհեստավարժ աշխատակազմով, որպես երկրի ռազմավարական նշանակության և բնակչության կենսապահովման կարևորագույն ոլորտները կարգավորող հեղինակավոր մարմին, իր առանցքային տեղն է զբաղեցնում պետական կառույցների շարքում՝ արժանանալով նաև միջազգային գործընկերների հարգանքին ու վստահությանը: Այդ է վկայում նաև փարբեր փուլերում հանրային նշանակության այլ ոլորտների, այդ թվում՝ ջրային համակարգի, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի ներառումը հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում:

Նախընթաց տարիներին Հանձնաժողովի կազմը ռտրացիոն սկզբունքով բազմիցս փոփոխության է ենթարկվել, սակայն դրված ամուր հիմքերը պահպանվել և առավել ամրապնդվել են կազմը համարող երիտասարդ սերնդի մասնագետների նվիրված աշխատանքի շնորհիվ: Այսօր արդեն նշում ենք հանձնաժողովի հիմնադրման 25-ամյակը: Հորեյանական այդ առիթով ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս, Հանձնաժողովի սրբեծման և արժանապատիվ կայացման մեջ իրենց ներդրումն ունեցող բոլոր հանձնաժողովականներին, երախտավորներին՝ մաղթելով հետագա բեղմնավոր գործունեություն և անձնական երջանկություն:

Գարեգին Բաղրամյան

Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի նախագահ
Տ. Գ. Թ. դոցենս

ՆԱԽԱԲԱՆ

Անցյալ դարի 90-ական թվականների ավարտին Հայաստանի Նորանկախ հանրապետության առջև ծառայած ծանր սոցիալ-տնտեսական խնդիրները ձևավորեցին հանրային կյանքի բոլոր ոլորտներում հիմնարար բարեփոխումներ իրականացնելու օբյեկտիվ պահանջ, որն առաջնահերթ իրացվեց նաև համակարգաստեղծ նշանակության և կենսապահովման համար առաջնային համարվող էներգետիկայի բնագավառում:

Անհրաժեշտ էր օր առաջ հատկորոշել պետության կողմից տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության առաջնահերթությունները, այնուհետ ողջ ներուժն ուղղել դրանց համակողմանի կյանքի կոչմանը: Միջազգային առաջավոր փորձը նախևառաջ պահանջում էր ոլորտում կառավարման և կարգավորման գործառնությունների տարանջատում՝ հիմք դնելով անկախ կարգավորման ինստիտուտի ձևավորմանն ու կայացմանը:

Այդ նպատակով 1997 թվականի ապրիլի 3-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը:

Ստեղծման առաջին իսկ օրվանից Հանձնաժողովն իր ողջ ջանքերն ուղղեց ոլորտի հիմնական իրավակարգավորումների սահմանմանը, որոնք միտված էին ապահովելու հանրապետության էներգետիկ անվտանգությունը, խթանելու տեղական էներգետիկական պաշարների և էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը, երաշխավորելու սպառողներին էլեկտրական, ջերմային էներգիայի, բնական գազի հուսալի ու անվտանգ մատակարարումը, նպաստելու մրցակցային միջավայրի ձևավորմանը, տե-

ղական և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և այլն:

2001 թվականի մարտի 7-ին ընդունված «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը վերանվանվեց ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի:

2003 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն՝ հանձնաժողովի կարգավորման ոլորտ ներառվեց նաև ջրային համակարգը: ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը վերանվանվեց ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողով:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կառավարման և կարգավորման գործառնությունների տարանջատմանն ու ոլորտի ազատականացմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների արդյունքում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորումը 2006 թվականից վերապահվեց Հանձնաժողովին:

Կարգավորող մարմնի ինստիտուցիոնալ կայացման նոր շրջափուլն արձանագրվեց 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում, երբ Հանձնաժողովին տրվեց ինքնավար մարմնի կարգավիճակ, և վերջինիս անդամների ընտրությունը վերապահվեց երկրի բարձրագույն օրենսդիր մարմնին: Նշված սահմանադրական փոփոխություններին հաջորդեցին Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված օրենսդրական փաթեթների մշակման և ընդունման աշխատանքները, որոնցից վերջինն իրավական ուժ ստացավ 2021 թվականի տարեվերջին:

ՀԱՆՁՆԺՈՂՈՎԻ
ԱՆԴԱՄՆԵՐԸ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ Ի ՎԵՐ



Վարդան Մովսեսյան

1997–2003 թթ.

ՀՀ Էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ



Ռորբերտ Նազարյան

2003–2018 թթ.

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի նախագահ



Նկոլայ Գրիգորյան

1997–2011 թթ.

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
նախագահի տեղակալ



Շիրազ Կիրակոսյան

1999–2017 թթ.

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
նախագահի տեղակալ,
հանձնաժողովի անդամ



Միքայել Սողոմոնյան

2017–2019 թթ.

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
նախագահի տեղակալ,
հանձնաժողովի անդամ



Աշոտ Հովսեփյան
1997–2001 թթ.
Հանձնաժողովի անդամ



Էմիլ Աճենյան
1997–2000 թթ.
Հանձնաժողովի անդամ



Մեն Ավագյան
1997–1999 թթ.
Հանձնաժողովի անդամ



Ռոբերտ Խարազյան
2000–2005 թթ.
Հանձնաժողովի անդամ



Սամվել Արարազյան
2001–2015 թթ.
Հանձնաժողովի անդամ



Մուշեղ Կոչեցյան
2005–2019 թթ.
Հանձնաժողովի անդամ



Արթուր Վարդանյան
2011–2019 թթ.
Հանձնաժողովի անդամ



Արմեն Բաղդասարյան
2015–2019 թթ.
Հանձնաժողովի անդամ



Մեսրոպ Մեսրոպյան
2019–2020 թթ.
Հանձնաժողովի անդամ





Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և քաղաքական մեծ նշանակություն ու հնչեղություն ունեցող է, որտեղ համակցվում են երկրի յուրաքանչյուր քաղաքացու, տնտեսվարողի և պետության շահերը: Հարաբերությունների այս հարթությունում պետական կարգավորման նպատակը նշված շահերի լավագույնս և հմտորեն հավասարակշռումն է:



Հանձնաժողովի գործող կազմը

- ◀ Ձախից աջ ներքևում՝ Գարեգին Բաղրամյան, Սեդա Շահինյան, վերևում՝ Կամո Սարգսյան, Արա Նռանյան, Սերգեյ Աղինյան

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Կարգավորումը հանրային ծառայությունների ոլորտում պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավասությունների իրականացմամբ ու ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ՝

- Հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող անձանց շահերը,
- կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ,
- նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը՝ աստիճանաբար սահմանափակելով կարգավորման շրջանակները,
- խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներն են՝

- էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.
- ջրային ոլորտը.
- հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը.
- փոստային կապի բնագավառը.
- երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով.
- տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ՝ միայն սակագների մասով:



25

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ
ՁԵՌՔԻԵՐՈՒՄ




Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքային բարեփոխումների մեկնարկ



1997 թվականին էներգետիկայի բնագավառում ներդրված ոլորտի կառավարման և կարգավորման գործառույթների տարանջատման արդյունքում ձևավորված էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա զարգացումը խթանելու նպատակով 2002–2004 թվականներին համակարգում նախաձեռնվեցին առաջին հիմնարար բարեփոխումները, որոնք հիմնականում ուղղված էին ոլորտում ներդրումների ներգրավմանը, հուսալիության ու անվտանգության երաշխավորմանը, ֆինանսական կայունության հաստատմանը: Այսպես.

- Բարեփոխումների մեկնարկը տրվեց բաշխիչ ցանցերի՝ «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց», «Կենտրոնական էլեկտրացանց» ՓԲԸ-ների մասնավորեցմամբ, որի արդյունքում էլեկտրական էներգիայի բաշխման համակարգը կենտրոնացվեց մեկ ընկերության գործունեության շրջանակում.
- Ներդրվեց մեկ միասնական գնորդ-վաճառողի մոդելը՝ մեկ միացյալ պարտադիր մեծածախ շուկայի ձևավորմամբ: Շուկայում արտադրվող էլեկտրական էներգիայի գնման և վաճառքի, ինչպես նաև համակարգային ծառայությունների մատուցման գործառույթները կենտրոնացվեցին մեկ միասնական ընկերությունում՝ «Հայէներգո» ՓԲԸ-ում՝ շուկայի ձևավորման սկզբնական փուլում խնդիրները մեկտեղելու և հնարավորինս համակարգված լուծումներ ապահովելու նպատակով:
- 2004 թվականից ոլորտում մեկնարկեց բարեփոխումների հաջորդ փուլը, երբ անցում կատարվեց արտադրող-բաշխող ուղիղ պայմանագրային հարաբերություններին՝ էներգետիկայի բնագավառում գործող ուղղահայաց ինտեգրված կառուցվածքից աստիճանաբար անցում կատարելով հորիզոնականի:



« 2002–2004 թվականներին համակարգում նախաձեռնվեցին առաջին հիմնարար բարեփոխումները... »



Հատուկ հաշվի մեխանիզմի ներդրում



2004 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական հոսքերի կայունությունն ապահովելու և ոլորտի ներդրումային գրավչությունը բարձրացնելու նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում ներդրվեց հատուկ հաշվի մեխանիզմը, որը նախատեսում էր՝

- ընկերության դրամական հոսքերի՝ մուտքերի և ելքերի ռեժիմների և դրանց վերահսկմանն ուղղված հստակ կարգավորումներ.
 - սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից հավաքագրված գումարների մուտքագրում և արտադրող կայաններին ու ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարում բացառապես «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշվից.
 - սպառողներից հավաքագրված և հատուկ հաշվին մուտքագրված դրամական միջոցների գրավադրում էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայանների և համակարգային ծառայություններ մատուցող ընկերությունների օգտին՝ մինչև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից վերջիններիս նկատմամբ դրամային պարտավորությունների ամբողջական կատարումը:
- Ռեֆորմը էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական հոսքերի շրջանառության տեսանկյունից ապահովեց գործառնական շրջայի բոլոր օղակների անընդհատ և շարունակական աշխատանք:

«Ռեֆորմը ապահովում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից արտադրող կայաններին և համակարգային ծառայություններ մատուցող ընկերություններին 100 % երաշխավորված վճարումներ:»



Փոքր հիդրոէներգետիկա



2004 թվականից սկսած բնական ջրահոսքերի վրա կառուցվող փոքր ՀԷԿ-երի համար ներդրվեց հաստատուն սակագնային կարգավորում. այն նախատեսում է ոչ թե յուրաքանչյուր ՀԷԿ-ի համար սակագնի հաշվարկ՝ ըստ ծախսային հողվածների, այլ նախօրոք սահմանված հաստատուն մեծության կիրառում:

Միտեցումը ենթադրում է տնտեսվարողի կողմից ՓՀԷԿ-ի կառուցման նախագծի իրագործման նպատակահարմարության քննարկում և որոշման կայացում՝


- նախապես տեղյակ լինելով հաստատված սակագներին,
- գնահատելով ներդրումային բոլոր ռիսկերը,
- ինքնուրույն գնահատելով նախագծի շահութաբերությունը:

2007 թվականին, փոքր ՀԷԿ-երի և վերականգնվող էներգաարտադրող կայանների համար օրենքով սահմանված գնման ողջ ժամանակահատվածում ամրագրվեց հաստատուն սակագների ճշգրտման բանաձևային կարգավորում՝ պայմանավորված սղաճով և փոխարժեքի փոփոխությամբ:


Արդյունքում, առավել կանխատեսելի և հստակ խաղի կանոնների ներդրմամբ և ներդրողների համար կարգավորման ռիսկերը նվազագույնի հասցնելու արդյունքում հանրապետությունում հիդրոէներգետիկան արձանագրեց զարգացման առաջանցիկ տեմպեր:

2022 թվականի հունվարի դրությամբ գործում են թվով 189 փոքր ՀԷԿ-եր՝ 2003 թվականի 29 փոքր ՀԷԿ-երի համեմատությամբ (որից 17-ը՝ նոր գործարկված):

2003–2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՂ
ՓՇԷԿ-ԵՐԻ ՔԱՆԱԿԸ



2003–2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՂ
ՓՇԷԿ-ԵՐԻ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄՎտ)





Արևային էներգետիկա



ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն՝ արևային էներգիայի օգտագործմամբ էլեկտրական էներգիայի արտադրության մասնաբաժինը մինչև 2030 թվականը նախատեսվում է հասցնել 1000 ՄՎտ-ի:

Թիրախային ցուցանիշի ապահովմանը միտված կարգավորումների արդյունքում ոլորտն արձանագրեց նշանակալի առաջընթաց: Մասնավորապես,


- 2017 թվականից մեկնարկեց մինչև 10 ՄՎտ հզորության սահմանաչափի շրջանակում փոքր հզորությամբ՝ մինչև 1 ՄՎտ, արևային էլեկտրակայանների լիցենզավորման գործընթացը՝ տնտեսվարողներին առաջարկելով այդ պահին շուկայում վերականգնվող էներգաարտադրողների համար գործող ամենաբարձր գինը՝ 8,9 ԱՄՆ ցենտ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի: Արդյունքում կառուցվեցին և շահագործվեցին թվով 12 արևային կայաններ:
- 2018 նոյեմբերից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար նախատեսվեց լրացուցիչ 200 ՄՎտ հզորության նոր սահմանաչափ՝ մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ կառուցելու համար՝ տնտեսվարողներին առաջարկելով առավել մրցունակ սակագին՝ 5 ԱՄՆ ցենտ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի: Սահմանաչափը սպառվեց մինչև 2020 թվականի ապրիլ ամիսը՝ թվով 49 ընկերությունների լիցենզավորման արդյունքում:
- 15 ՄՎտ գումարային հզորության սահմանաչափի շրջանակում մեկնարկեց համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով լիցենզավորման գործընթացը:

- Միջազգային մրցույթի արդյունքում կնքված ՊՄԳ-ի շրջանակում 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման և շահագործման համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվեց «ԷֆԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ին: Մրցույթի արդյունքում առաջարկված սակագինը, որն իր հետագա ամրագրումն ստացավ նաև ընկերությանը տրամադրված լիցենզիայում՝ 4.19 ԱՄՆ ցենտ/կՎտժ է (առանց ԱԱՀ-ի): Նշված սակագինն իր դրական ազդեցությունն ունեցավ արևային էլեկտրակայանների համար իրականացվող հետագա սակագնային քաղա-


- քականության վրա՝ հանդիսանալով գործող սակագների նվազեցմանն ուղղված դրական գործոն:
- ՀՀ կառավարության կողմից հաստատվեցին 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և շահագործման ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքները: Մրցութային գործընթացում, որին ներգրավված էր նաև հանձնաժողովը, հաղթող ճանաչվեց «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») ընկերությունը՝ առաջարկած 2.9 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի) սակագնով:



ԱՐՏԱԴՐՈՂ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ



ԱՐՏԱԴՐՈՂ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄՎտ)



« ...արևային էներգիայի
օգտագործմամբ էլեկտրա-
կան էներգիայի արտադ-
րության մասնաբաժինը
մինչև 2030 թվականը նա-
խատեսվում է հասցնել
1000 ՄՎտ-ի: »





Ինքնավար էներգաարտադրություն




Վերջին տարիներին էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեությանը զուգահեռ, հանրապետությունում լայն թափ ստացավ վերականգնվող էներգառեսուրսների կիրառմամբ ինքնավար էներգաարտադրությունը:

Ինքնավար էներգաարտադրությունը սպառողին հնարավորություն է տալիս առանց գործունեության լիցենզիա ստանալու՝ արտադրելու և սպառելու էլեկտրական էներգիա՝ միաժամանակ ավելցուկն առաքելով բաշխման ցանց՝ հաշվարկային տարվա ընթացքում այն սպառելու կամ, հակառակ պարագայում, համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությամբ:

2016–2021 թթ. ընթացքում ինքնավար էներգաարտադրության գործընթացին առնչվող ամբողջական և խթանող կարգավորումների ներդրման արդյունքում բաշխման ցանցին են միացել շուրջ 7000 ինքնավար էներգաարտադրողներ՝ 136.0 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:

Ստորև ներկայացված է ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան 2016–2021 թվականների արդյունքներով.

Ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի ռինամիկան 2016–2021 թվականների արդյունքներով



Այս գործընթացը տարեցտարի առավել նշանակալի է դառնում հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով, քանի որ այն թույլ է տալիս էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմներն ինչպես կենցաղային մակարդակում՝ նվազեցնելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող բնակիչ-սպառողների էլեկտրական էներգիայի գծով ծախսերը, այնպես և գործարար միջավայրում՝ նպաստելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

2021 թվականին «Էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխություններով մեկնարկել է ինքնավար էներգաարտադրության բարեփոխումների նոր փուլ, որի կիրարկումը նախատեսվում է 2022 թվականի մայիսի 1-ից: Օրենսդրական նոր կարգավորումը ինքնավար էներգաարտադրողներին հնարավորություն է տալիս՝

- ինքնավար էներգաարտադրության շրջանակում ձևավորել խմբեր և դրանցում ընդգրկել այլ ինքնավար էներգաարտադրողների և սպառողների,
- էլեկտրական էներգիան արտադրել էլեկտրաէներգետիկական համակարգի տարրեր կետերում և սպառել նույնպես տարրեր կետերում:

Ռեֆորմը որպես հեռանկարային և ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի հսկայական ներուժ պարունակող հնարավորություն է տալիս տարբեր տնտեսական հետաքրքրություն և ռեսուրսներ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց միավորվել փոխադարձ տնտեսական շահ պարունակող տարատեսակ նախագծերի շուրջ՝ միաժամանակ ինքնավար խմբի ներսում ունենալով չկարգավորվող հարաբերություններ:





« Ինքնավար էներգաարտադրողն իրավունք ունի՝

- ձևավորել խմբեր և դրանցում ընդգրկել այլ ինքնավար էներգաարտադրողների և սպառողների,
- էլեկտրական էներգիան արտադրել էլեկտրաէներգետիկական համակարգի տարրեր կետերում և սպառել նույնպես տարրեր կետերում: »




Գազաֆիկացում



Շնորհիվ Հանձնաժողովի կողմից իրականացվող արդյունավետ սակագնային քաղաքականության, որը ապահովում էր կատարված ներդրումների երաշխավորված վերադարձ, Հայաստանի Հանրապետությունը գազիֆիկացման մակարդակով՝ ավելի քան 96%, գրավում է առաջատար դիրքեր աշխարհում:

Գազամատակարարման համակարգի բնակիչ-բաժանորդների քանակի դինամիկան



Գազամատակարարման համակարգի ընդհանուր բաժանորդների թվաքանակը 2022 թվականի դրությամբ շուրջ 755000 է, համեմատության համար նշենք, որ 2003 թվականին բաժանորդների քանակը եղել է 119000, իսկ ԽՍՀՄ տարիներին՝ 485000:



Ջրային ոլորտ



2003 թվականին Ջրային օրենսգրքում կատարված փոփոխությունների ուժով ջրային համակարգերի կարգավորման գործառույթը ևս վերապահվեց հանձնաժողովին:


Համակարգում գործող պայմանագրային բնույթի հարաբերություններին փոխարինվեցին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրման և սակագների սահմանման վարչաիրավական հարաբերությունները, որոնք հետագա օրենսդրական բարեփոխումների արդյունքում վերափոխվեցին լիցենզավորման հարաբերությունների՝ միաժամանակ հանձնաժողովին վերապահելով ոլորտի արդյունավետ կարգավորմանն ուղղված առավել ընդգրկուն գործիքակազմով:

Կարգավորման սկզբնական փուլը նշանավորվեց ջրային համակարգում մրցութային սակագնային կարգավորման ներդրմամբ, երբ մշակվեց Երևան քաղաքի ջրամատակարարման համար անցկացվող միջազգային մրցույթի փաթեթի մաս կազմող՝ հանձնաժողովի իրավակարգավորումների փաթեթը, որոնք հետագայում ներառվեցին մրցույթում հաղթող ճանաչված Վեոլիա գրուպի կողմից Հայաստանում հիմնադրված ընկերության՝ «Երևան Զուր» ՓԲԸ-ին տրամադրված ջրային համակարգերի օգտագործման թույլտվության պայմաններում և սակագնային կարգավորումներում:

Համապատասխան թույլտվություններ, ապա լիցենզիաներ տրամադրվեցին նաև այլ ջրամատակարար ընկերությունների:

2016 թվականին կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում ՀՀ-ում գործող նախկին 5 ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքի ջրային համակարգերի կառավարումը 15 տարի ժամկետով վարձակալությանը փոխանցվեց մրցույթում հաղթող ճանաչված Վեոլիա գրուպի կողմից հիմնադրված «Վեոլիա ջուր» ընկերությանը: Ընկերությունն իր գործունեությունն սկսեց 2017 թվականի հունվարի 1-ից: Այս դեպքում նույնպես խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բազիսային սակագները ձևավորվեցին մրցույթի արդյունքում, որոնք յուրաքանչյուր տարի ձգարտվում են ըստ սահմանված գործոնների:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման բազիսային սակագների վարձակալության 15 տարիների սցենարը և դրանց հետագա փոփոխությունները ներկայացված է ստորև.





Նոր սպառողների միացում



Սկսած 2008 թվականից Էներգետիկայի բնագավառում ներդրվեց նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման նոր կարգավորումներ, համաձայն որոնց՝

- նոր սպառողների միացման աշխատանքներն իրականացվում են մատակարարի կողմից՝ միացման վճարի հիման վրա.
- ենթակառուցվածքների ստեղծման և հետագա շահագործման պատասխանատվությունը կրում է մատակարարը, որն էլ իր հերթին բերում է ենթակառուցվածքների համակարգված զարգացմանը՝ բարձրացնելով համակարգի հուսալիության և անվտանգության մակարդակը.
- նոր բաժանորդների միացումը ֆինանսական բեռ չի ստեղծում մյուս գործող սպառողների համար:
Սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման գործընթացի հետագա բարելավման արդյունքում՝
- զգալիորեն կրճատվեցին և նվազագույնի հասցվեցին միացման ժամկետները և գործընթացները.
- ներդրվեց դիմումների ներկայացման և պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգ.
- մեկ միասնական պայմանագրում ներառվեց սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման գործընթացները:

Որպես օրինակ, էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման դեպքում միացման տևողությունը ներկայումս 55 օր է՝ 2011 թվականին գործող 242 օրվա համեմատությամբ:

Բարեփոխումները հիմք հանդիսացան նաև Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավման համար: 2019 թվականի զեկույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը այդ ցուցիչի մասով 190 երկրների շարքում զբաղեցրեց 17-րդ հորիզոնականը՝ 2012 թվականի՝ 150-րդի համեմատությամբ:





Խթանիչ թիրախային սակագնային կարգավորում



Հանձնաժողովը 2016 թվականին առաջին անգամ կիրառեց խթանիչ-թիրախային սակագնային կարգավորում, որի հիմնական նպատակը լիցենզավորված անձի ծախսերի օպտիմալացման և կորուստների կրճատման խրախուսումն էր:

Կարգավորումը ներդրվեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում:

Այն հնարավորություն է ընձեռում ընկերությանը մինչև նախանշած ժամկետի ավարտը տնօրինելու օպտիմալացման արդյունքում գոյացող խնայողությունները (օգուտները), որոնք նախատեսված ժամկետի ավարտին ենթակա են նվազեցման ընկերության հասույթից՝ դրական ազդեցություն ունենալով սպառողների համար սահմանվող սակագների վրա:

Արդյունքում, ընկերության ծախսերն ու էլեկտրաէներգիայի կորուստների թույլատրելի մեծություններն ամրագրվեցին կարգավորման 3 (հնգամյա, քառամյա, եռամյա) ժամանակահատվածների համար՝ միաժամանակ ամրագրելով հիմնական կատարողական ցուցանիշներ՝ կարգավորման 3 ժամանակահատվածներից յուրաքանչյուրի ավարտի համար:


Ընկերության տասներկուամյա ներդրումային գործունեության թիրախային ցուցանիշները ներկայացված են ստորև.

Անվանում	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028
Կորուստները տոկոսով ցանցի մուտքի նկատմամբ	11,03%	11,03%	11,03%	11,03%	11,03%	7,50%	7,50%	7,50%	7,50%	7,00%	7,00%	7,00%	6,40%
Նյութական և նորոգման ծախսերի նվազեցում*						30%				20%			15%
Աշխատողների քանակ	7 806	7 806	7 806	7 806	7 806	6 706	6 706	6 706	6 706	6 426	6 426	6 426	6 146
Այլ ծախսերի նվազեցում										10%			10%
SAIDI ցուցանիշի նվազեցում										25%			25%
SAIFI ցուցանիշի նվազեցում										25%			25%
Լարման շեղման տևողության կրճատում										50%			100%
Լարման շեղման հաճախականության կրճատում										50%			100%
Քաղաքներում միանգամյա հոսանքազրքման առավելագույն տևողություն	4	4	4	4	4	4	4	4	4	3	3	3	2
Գյուղերում միանգամյա հոսանքազրքման առավելագույն տևողություն	8	8	8	8	8	8	8	8	8	6	6	6	4

Հաշվի առնելով, որ 2021 թվականին ավարտվեց խթանիչ սակագնային կարգավորման 1-ին՝ հնգամյա ժամանակահատվածը, 2021 թվականի փետրվարի 1-ից ուժի մեջ մտած սակագներում՝

- բաշխման ցանցի կորուստներն ընդունվել են 2-րդ՝ քառամյա ժամանակաշրջանի համար նախատեսված 7,5% մեծության չափով՝ նախկին 11,03%-ի փոխարեն: Արդյունքում, էլեկտրական էներգիայի գնման ծախսը կրճատվել է շուրջ 8.5 մլրդ դրամով՝ վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնելով 1.76 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):
- շահագործման և պահպանման ծախսերն ու անհուսալի դեբիտորական պարտքերը կրճատվել են շուրջ 2,8 մլրդ դրամի չափով՝ վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնելով 0.58 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Հաշվի առնելով սպառողների սակագների վրա դրական ազդեցությունը՝ նախատեսվում է այն ներդնել նաև գազամատակարար ընկերությունում:







Շուկայի ազատականացումն ու մրցակցությունը հեռահաղորդակցության ոլորտում



Մինչև 2006 թվականը ՀՀ հեռահաղորդակցության ծառայությունների շուկան՝

- ըստ էության մենաշնորհային էր, գործում էր մեկ ընկերություն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն՝ բացառիկ իրավունքներով (բացառությամբ՝ շարժական կապի 2-րդ օպերատոր «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի գործունեության),
- ոլորտի քաղաքականության սահմանման և կարգավորման գործառնությունները համատեղում էր ՀՀ տրասնպորտի և կապի նախարարությունը, որը նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 10% պետական բաժնեմասի կառավարողն էր:

Նման մոդելով ոլորտային կարգավորումը շատ ռիսկային էր ու խնդրահարույց, այդ թվում՝ շահերի բախման տեսանկյունից, և խաթարում էր ոլորտի զարգացումը: Գերակա խնդիր էր մրցակցության ապահովումը, որին խոչընդոտում էր ոլորտում գործող ինստիտուցիոնալ կառուցվածքը: Ստեղծված իրավիճակից ելքը ոլորտի աստիճանական ազատականացումն էր և նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումը՝ հիմնված ոլորտի քաղաքականություն իրականացնող իրավասու մարմնի և անկախ կարգավորող մարմնի գործառնության լուրջ անջատման վրա:

2006 թվականից ստանձնելով ոլորտի կարգավորման գործառնությունները, Հանձնաժողովը նախաձեռնեց աստիճանական ազատականացման գործընթաց, որն ամբողջական ավարտին հասավ 2007 թվականի վերջին:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում մրցակցության երաշխավորման մանդատի իրագործմանն ուղղված Հանձնաժողովի առանցքային քայլերը.

- 2013 թվականին դասակարգվեցին հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները և սահմանվեցին թվով 6 մեծածախ և 1 մանրածախ ծառայությունների շուկաները: Ընդ որում, 2009–2019 թվականների ընթացքում ոլորտում մրցակցության զարգացմամբ միջազգային «ԱՅՓԻ» (IP transit) տարացիկ հոսքեր ներմուծող ընկերությունների թվի աճի արդյունքում տվյալ հոսքերի էական աճով և սակագների շոշափելի նվազմամբ պայմանավորված՝ տվյալ շուկայի հետագա կարգավորման նպատակահարմարությունից ելնելով, այն հանվեց կարգավորման ենթակա շուկաների ցանկից.
- 2011 թվականին կանոնակարգվեցին հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների (տվյալ դեպքում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի) կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման պայմանները

(այդ թվում՝ սահմանվեց գերիշխող օպերատորի պարտավորությունները) և սահմանվեց վարձակալության վճարները.

- 2014 թվականին օպերատորները պարտավորվեցին հաճախորդների սպասարկման գործառնական գրասենյակներում և ինտերնետային կայքերում հրապարակել իրենց ամրակցված և շարժական կապի ցանցերի հասանելիության՝ ծառայություններով ապահովված բնակավայրերի, կիրառվող տեխնոլոգիաների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդ որում, շարժական կապի մասով հրապարակվում է նաև ծածկույթ չունեցող բնակավայրերի ցանկը, ինչը մրցակցության խթանման յուրօրինակ գործիք է օպերատորների կողմից հնարավորինս ընդլայնելու շարժական կապի ծածկույթի հասանելիությունը.
- շարժական կապի օպերատորները պարտավորեցվեցին շարժական կապի ցանցերից դեպի ամրակցված կապի ցանցեր, իսկ ամրակցված կապի օպերատորները՝ ամրակցված կապի ցանցերից դեպի շարժական բջջային կապի ցանցեր կատարվող զանգերի համար կիրառել միևնույն սակագինը՝ ըստ յուրաքանչյուր սակագնային փաթեթի:





Շարժական (բջջային) կապի հասանելիություն 100% բնակավայրերում



ՀՀ բոլոր (100%) բնակավայրերը ապահովված են շարժական կապի 2G, 3G և 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով, ընդ որում, 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված են՝

- ՀՀ բոլոր (100%) բնակավայրերը՝ առնվազն մեկ օպերատորի կողմից,
- ՀՀ բնակավայրերի 91%-ը (911 բնակավայր)՝ առնվազն 2 օպերատորի կողմից,
- ՀՀ բնակավայրերի 12.8%-ը (128 բնակավայր)՝ երեք օպերատորի կողմից, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է 69%:

Ենթակառուցվածքների զարգացման, նոր տեխնոլոգիաների ներդրման և ծառայությունների հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների շրջանակում, շարժական կապի ենթակառուցվածքների զարգացման, այդ թվում՝ LTE Advanced/4G+ տեխնոլոգիայի ծածկույթի նման ցուցանիշ հնարավոր է եղել արձանագրել ոլորտի ձկուն՝ առավելապես թիրախային կարգավորման արդյունքում: Մասնավորապես.

- 2008 թվականին շարժական կապի շուկա մուտք գործեց 3-րդ օպերատորը՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն, որը մրցույթի արդյունքում տրամադրված լիցենզիայով սահմանված պարտավորությունների կատարման արդյունքում՝
- 3 տարվա ընթացքում ավելի քան 200 բնակավայրերում (ներառյալ՝ Երևան և հանրապետության 42 քաղաք) ապահովեց տվյալ պահին նորագույն համարվող՝ 3G տեխնոլոգիայի շարժական կապի ծածկույթով.
- ՀՀ պետական բյուջե վճարեց 51.5 մլն եվրո գումար, ինչպես նաև 2008–2016թթ. իրականացրեց շուրջ 250 մլն եվրոյի ներդրումներ,

- Հաջորդիվ, «ԱրմենՏել» (ներկայումս՝ «Տելեկոմ Արմենիա»), «Ղ-Տելեկոմ» (ներկայումս՝ «ՄՏՍ Հայաստան»), «Օրանժ Արմենիա» (ներկայումս «Յուբոն») ընկերություններին պարտավորեցվեց շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող թվով 18 բնակավայրերում, (յուրաքանչյուր օպերատորի կողմից առնվազն 6-ական բնակավայր) ապահովել ծածկույթ, որի արդյունքում 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր բնակավայրերն ապահովվեցին առնվազն մեկ օպերատորի շարժական կապի ծածկույթով,
- 2013 թվականին 800ՄՀց ռադիոհաճախականությունների առաջին հատվածի տրամադրման մրցույթի արդյունքում «Յուբոն» ՓԲԸ-ին տրամադրված թույլտվության պայմաններով սահմանված պարտավորության կատարման արդյունքում ընկերության կողմից ՀՀ բնակավայրերի 88.2%-ն ապահովվեց LTE Advanced/4G+ տեխնոլոգիայի ծածկույթով,
- հետագայում, 2019 թվականին իրականացված՝ 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի երկրորդ հատվածի տրամադրման մրցույթի արդյունքում, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին տրամադրված թույլտվության պայմաններով ամրագրված պարտավորության համաձայն՝ ընկերությունը պարտավորվեց մեկ տարվա ընթացքում հանրային շարժական կապի LTE Advanced/4G+ տեխնոլոգիայի ծածկույթով չապահովված՝ ՀՀ բնակավայրերի առնվազն 12%-ը և երկու տարվա ընթացքում՝ ՀՀ բնակավայրերի առնվազն 80%-ը ապահովել լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթով: Նշված պարտավորության կատարման արդյունքում ընկերության կողմից ՀՀ բնակավայրերի 99.9%-ն ապահովվեց LTE Advanced/4G+ տեխնոլոգիայի ծածկույթով:





Ամրակցված (ֆիքսված) կապի հասանելիություն 100 % բնակավայրերում



ՀՀ բոլոր (100%) բնակավայրերն ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ, մասնավորապես.

- 995 (99.4%) բնակավայր՝ անլար տեխնոլոգիաների ամրակցված հեռախոսակապով և լայնաշերտ ինտերնետով,
- 233 (23.3%) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների ամրակցված հեռախոսակապով,
- 628 (62.7%) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների լայնաշերտ ինտերնետով, որից 565 բնակավայր (56.5%) տարեկան առնվազն 10% աճի տեմպով՝ հասանելի են դարձել օպտիկամանրաթելային տեխնոլոգիայով՝ ընդգրկելով բնակչության ավելի քան 96.5%-ը,

Ներկայումս ոլորտում գործում են ամրակցված (ֆիքսված) հեռախոսակապի 8 օպերատորներ, ինչպես նաև ինտերնետ ծառայություններ մատուցող ավելի քան 190 օպերատորներ, որոնցից 167-ը ծառայություններ են մատուցում մարզերում: Համեմատության համար արձանագրենք, որ մինչ հանձնաժողովի կողմից ոլորտի կարգավորումը՝ 2006 թվականը հանրապետությունում ամրակցված (ֆիքսված) հեռախոսակապի հասանելիությամբ ապահովված չէր ավելի քան 200 բնակավայր և ոլորտում գործում էր ամրակցված հեռախոսակապի մեկ օպերատոր՝ մենաշնորհային իրավունքներով:

Նշված ցուցանիշների արձանագրումը հնարավոր եղավ ապահովել՝

- Հանձնաժողովի կողմից գործարար միջավայրի բարելավմանն ու վարչարարության պարզեցմանն ուղղված քայլերով.
- ոլորտում մրցակցության զարգացմամբ, խոշոր օպերատորների կողմից օպտիկամանրաթելային մայրուղային ցանցերի կառուցմամբ և մարզերում նոր կապի օպերատորների մուտքով.
- ամրակցված կապի ենթակառուցվածքների զարգացման և նոր տեխնոլոգիաների ծառայությունների հասանելիության ապահովման մասով Հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների կատարմամբ: Մասնավորապես.
- 2006–2007 թվականներին, նկատի ունենալով հանրապետությունում ամրակցված հեռախոսակապի հասանելիության, ինչպես նաև գործող հեռախոսակայանների թվայնացման ոչ բավարար մակարդակը, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարմամբ 376 բնակավայր ապահովվեց CDMA անլար տեխնոլոգիայի ամրակցված հեռախոսակապով և ավելի քան 800 բնակավայրում ավարտին հասցվեց հեռախոսակայանների թվայնացումը: Այնուհետև, ընկերությունը, համաձայն սահմանված հետագա պարտավորությունների, CDMA տեխնոլոգիայի հեռախոսացանցի արդիականացմամբ հնարավորություն ընձեռեց ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայություններ 996 բնակավայրերում.
- հետագայում, «Յուբոն» և «ՋիԷնՍի-Ալֆա» («Rostelecom» ապրանքանիշ) ընկերություններին տրամադրված ամրակցված հեռախոսակապի համարային ռեսուրսի օգտագործման թույլտվություններով ամրագրված պարտավորությունների կատարմամբ 2013–2018 թվականների ընթացքում հանրապետության շուրջ 50 բնակավայր (ներառյալ՝ բոլոր քաղաքային բնակավայրերը) ապահովվեցին օպտիկամանրաթելային ցանցի հասանելիությամբ.
- «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հանրային ամրակցված ցանցի ենթակառուցվածքների զարգացման պարտավորությունների կատարման արդյունքում 2016–2018 թվականներին օպտիկամանրաթելային կապուղիների հասանելիությամբ ապահովվեց պաշտպանունակության տեսանկյունից ռազմավարական նշանակության 40 բնակավայր:





Փոխկապակցում



Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում մրցակցության երաշխավորման ապահովման նպատակով կանոնակարգվեց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցումը: Այդ նպատակով Հանձնաժողովը՝

- նախաձեռնեց և իրականացրեց շարժական (բջջային) և ամրակցված (ֆիքսված) հեռախոսակապի օպերատորներին համապատասխանաբար՝ իրենց անհատական հանրային շարժական կապի և ամրակցված կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու գործընթացները,
- կարգավորեց այդ շուկաներում զանգերի վերջնավորման (փոխկապակցման) վճարները՝ Հանձնաժողովի հաստատած՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկայի հիման վրա:

Շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիություն (MNP)



Հանձնաժողովի կողմից շարժական կապի օպերատորների հետ քննարկումների արդյունքում ներդրվեց և 2014 թվականից գործարկվեց շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության ծառայությունը, որը՝

- բաժանորդների համար անվճար է,
- իրականացվում է «մեկ պատուհանի» սկզբունքով, այսինքն բաժանորդը՝ համարի տեղափոխելիության ծառայությունից օգտվելու մտադրության դեպքում, դիմում է միայն ընդունող օպերատորին,
- մատուցվում է անկախ բաժանորդի ունեցած պարտքից,
- մատուցվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:





Արագ արձագանքման ծառայության համընդհանուր հասանելիության ապահովում և բաժանորդի տեղորոշում



- Արտակարգ պատահարների արագ արձագանքման «911»/«112» ծառայության համընդհանուր հասանելիության ապահովման նպատակով 2014 թվականին սահմանվեց շարժական կապի յուրաքանչյուր օպերատորի կողմից, իր շարժական կապի ծածկույթի սահմաններում, իր և այլ օպերատորների բաժանորդների անվճար հասանելիության ապահովման պարտավորություն «911» և «112» ծառայությանը,
- Հանձնաժողովն սահմանեց արտակարգ պատահարների արագ արձագանքման (փրկարար) ծառայության, ոստիկանության և շտապ բժշկական օգնության համարներին (911,101,102,103) կատարվող կանչերի դեպքում հաճախորդի տեղորոշման կարգն ու պայմանները:





Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովում



Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովման նպատակով հանձնաժողովի ներդրած կարգավորումների արդյունքում՝

- կապի օպերատորները ՀՀ սահմանը հատող միջազգային կապուղիների կամ տվյալների հոսքերի վարձակալման կամ ձեռքբերման դեպքում այդ կապուղիների կամ հոսքերի ՀՀ սահմաններից դուրս աշխարհագրական երթուղիների վերաբերյալ համաձայնությունները նախապես համաձայնեցնում են հանձնաժողովի հետ.
- ինտերնետ ծառայություններ մատուցող օպերատորները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ տրամադրելիս կրում են «ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (ԴՌՍ/ԴԴՌՍ (DOS/DDoS) հարձակումներից ինտերնետ կապի պաշտպանվածության ապահովման պարտավորություն.
- «Տելեկոմ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» և «Յուբոն» ՓԲԸ-ները Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքներով շարունակաբար կատարելագործում են իրենց հանրային շարժական կապի ցանցերի SS7 համակարգերի հուսալիությունն ու պաշտպանվածությունը.
- շարժական կապի օպերատորների ցանցերով պետական մարմինների կողմից չպատվիրված (այլ անձանց կողմից չարամտորեն ուղարկված) կարճ հաղորդագրությունների (SMS) ուղարկման դեպքերը բացառելու նպատակով սահմանվեցին օպերատորների ցանցերով իրենց կամ ինտերակտիվ

(կարճ հաղորդագրությունների առաքման) ծառայություններ մատուցող անձանց կողմից բացառապես պատվիրված կարճ հաղորդագրությունների ուղարկման ապահովմանն ուղղված պահանջներ.

- Ներդրվեց կապի ցանցերով չարտոնված կանչերի (հեռախոսագանգ, կարճ հաղորդագրություն) իրականացումը բացառելու մասին կարգավորում՝ ներառյալ հեռախոսակապի օպերատորի կողմից չարտոնված կանչերի կանխարգելման համակարգի գործարկման պահանջները:






Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը բնութագրող առանցքային ցուցանիշներ




Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության խթանումը, ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման կարգավորման քաղաքականության իրականացումը նպաստեցին հետևյալ առանցքային ցուցուցանիշների արձանագրմանը.

- Ներկայում ոլորտում գործում է միջազգային տարանցիկ IP հոսքեր ապահովող 4 ընկերություն՝ 9 կապուղիներով: Հոսքերի թողունակությունը կազմում է 833 000 Մբիթ/վրկ, իսկ 1 Մբիթ/վրկ արժեքը՝ 510 դրամ: Համեմատության համար նշենք, որ 2006 թվականին նշված ծառայությունն ապահովում էր 1 ընկերություն՝ 1 կապուղով, և հոսքերի թողունակությունը կազմում էր 56 Մբիթ/վրկ, իսկ 1Մբիթ/վրկ արժեքը՝ 5 461 600 դրամ: **Արդյունքում, հոսքերի թողունակությունն աճել է ավելի քան 14 800 անգամ, իսկ գինը նվազել՝ շուրջ 10 700 անգամ.**
- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդները **3 309 685 են՝ 2008 թվականի 631 354-ի համեմատությամբ. աճը ավելի քան 5 անգամ է.**
- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդները **3 140 925 են՝ 2008 թվականի 13 800-ի համեմատությամբ. աճը ավելի քան 227 անգամ է,** իսկ օգտագործման ծավալների աճը 2015–2021 թվականների ընթացքում ավելի քան 7 անգամ՝ 0,32 էկզաբայթից հասնելով 2,35 էկզաբայթի.
- 2012–2021 թվականների ընթացքում շարժական լայնաշերտ ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակը աճել է ավելի քան 3 անգամ, իսկ ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակը՝ ավելի քան 2 անգամ (դիագրամը ստորև).



- 2015–2021 թվականների ընթացքում շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները աճել են ավելի քան 5 անգամ, իսկ ամրակցված լայնաշերտ ինտերնետինը՝ ավելի քան 7 անգամ (դիագրամը՝ ստորև)։






Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում



2018–2022 թթ. ՀՀ էներգետիկայի բնագավառում մեկնարկեցին արմատական փոփոխություններ:

Մինչ բարեփոխումները գործող համակարգը անբողջությանը կարգավորվող էր և ուներ հետևյալ կառուցվածքը.



2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական շուկան ամբողջովին կարգավորվող մոդելից անցում կատարեց նոր՝ առավել ազատական մոդելի: Համակարգում ներդրվեցին մրցակցային շուկայի բաղադրիչներ, որոնք միտված են՝

- ապահովելու նոր մրցակցային մասնակիցների մուտքը էլեկտրաէներգետիկական շուկա,
- լավարկելու պլանավորումը՝ ներդնելով գնագոյացման առավել արդար մեխանիզմ և առաջացած շեղումների համար հասցեական պատասխանատվություն,
- հնարավորություն ընձեռելու սպառողներին՝ ընտրելու այլ մատակարար կամ որպես որակավորված սպառող ինքնուրույն գնելու էլեկտրական էներգիա մեծածախ շուկայից,
- խթանելու այլ երկրների հետ էլեկտրական էներգիայի առևտուրը:

էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված բարեփոխումները հնարավոր եղավ իրականացնել բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերի մեկտեղմամբ՝

- կառավարության, այդ թվում՝ լիազոր մարմնի քաղաքական կամքի հստակ ամրագրմամբ,
- Հանձնաժողովի կողմից առաջնահերթությունների սահմանմամբ և ենթաօրենսդրական դաշտի մշակմամբ ու ընդունմամբ,
- ԱՄՆ ՄԶԳ էներգետիկայի ծրագրի շրջանակում տրամադրված գործուն և ընդգրկուն խորհրդատվությամբ, ինչպես նաև վերջինիս կողմից համակարգին նվիրաբերված և շուկայի բնականոն աշխատանքի համար առանցքային համարվող շուկայի կառավարման ծրագրով:


Բարեփոխումների շրջանակում իրականացված հսկայածավալ և բազմապրոֆիլ աշխատանքների արդյունքում մշակվեցին և ընդունվեցին շուկայի ներկայիս մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերը՝

- «էներգետիկայի մասին» օրենքում փոփոխությունները,
- էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները և պայմանագրերը,
- էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի կանոնները և պայմանագրերը,
- Հաղորդման ցանցի կանոնները,
- Բաշխման ցանցի կանոնները:

Մեծածախ շուկայում ամրագրված առևտրային բաղադրիչները ենթադրում են էլեկտրական էներգիայի նախկինում գործող ամսական առևտրի փոխարեն ժամային առևտուր՝

- Կարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում,
 - Չկարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում,
 - Օր առաջ շուկայում,
 - Հաշվեկշռման շուկայում՝ սահմանված մեխանիզմով:
- Մանրածախ շուկայում ամրագրված առևտրային բաղադրիչները ենթադրում են՝
- էլեկտրական էներգիայի գնում երաշխավորված մատակարարից՝ կարգավորվող գներով կամ
 - էլեկտրական էներգիայի գնում մրցակցային մատակարարից՝ չկարգավորվող գներով:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդել



Էլեկտրական Էներգիայի մրցակցային արտադրություն և սպառման հնարավորությունների ընդլայնում



Նպատակ ունենալով նպաստել էլեկտրաէներգետիկական նորաստեղծ մրցակցային շուկայում առևտրի ակտիվացմանը, տարածաշրջանային առևտրի զարգացմանն ու վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման խթանմանը, 2021 թվականին «Էներգետիկայի մասին» օրենքում նախաձեռնվեցին փոփոխություններ, որոնց համաձայն՝

- հնարավորություն ստեղծվեց էլեկտրական էներգիայի օրենքով սահմանված գնման երաշխիքից հրաժարվելու դեպքում կառուցելու և շահագործելու վերականգնվող ռեսուրս օգտագործող կայաններ՝ անկախ տվյալ կայանների համար գործող քվոտավորումից.
- բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիա արտադրող կայաններին տրվեց էլեկտրական էներգիայի վաճառքի իրավունք.
- էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին և բացառապես սեփական կարիքի համար էլեկտրական էներգիա արտադրող անձին տրվեց նաև էլեկտրական էներգիան էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում արտադրելու և նույն կամ տարբեր կետերում սպառելու իրավունք:

Օրենսդրական բարեփոխումները կգործեն 2022 թվականի մայիսի 1-ից:





Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացման օրենսդրական բարեփոխումներ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

REPUBLIC OF ARMENIA
 PUBLIC SERVICES
 REGULATORY
 COMMISSION

Կարգավորող մարմնի ինստիտուցիոնալ կայացման նոր շրջափուլն արձանագրվեց 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, երբ հանձնաժողովին վերապահվեց ինքնավար մարմնի կարգավիճակ և վերջինիս անդամների ընտրությունը վերապահվեց երկրի բարձրագույն օրենսդիր մարմնին: Նշված սահմանադրական փոփոխություններին հաջորդեցին Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակման և ընդունման աշխատանքները, որոնք իրավական ուժ ստացան 2021 թվականի տարեվերջին: Նշված փոփոխություններով՝

- Հստակեցվեցին Հանձնաժողովին օրենքով վերապահված լիազորությունները, այդ թվում՝ մոնիթորինգի իրականացման, իրավախախտման փաստի արձանագրման դեպքում մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու ու դրանից բխող գործողություններ կատարելու կամ այդ մասին հանձնարարականներ տալու, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տույժերի կիրառման, ինչպես նաև կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցման, էներգետիկայի բնագավառում հաստատուն (առավելագույն) սակագնային մեխանիզմների կիրառման մասով.
- Նախատեսվեցին Հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկման, այդ ընթացքում դրանց հետագա գործողությանն առնչվող հստակ կարգավոր-

րումներ, որոնք ուղղված են այդ ակտերի՝ ժամանակին կատարման ուժով իրենց նպատակին ծառայելուն.

- ամրագրվեցին Հանձնաժողովի (անդամների) գործունեության անկախության երաշխիքներ, և հանձնաժողովի անդամների լիազորությունները հստակ ամրագրող կարգավորումներ,
- Հանձնաժողովի նիստերի հրավիրման և անցկացման, ինչպես նաև ընդունվող որոշումներին վերաբերող օրենսդրական կարգավորումները համապատասխանեցվեցին առկա իրողություններին.
- լրամշակվեցին կարգավորման պարտադիր վճար վճարողներ համարվելու չափանիշները և դրանց շրջանակը, բարելավվեց հանձնաժողովի գործունեության ֆինանսավորման մեխանիզմը՝ հնարավորություն տալով հաշվետու տարվա ընթացքում կարիքն առաջանալու դեպքերում համապատասխան փոփոխություններ կատարել կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկում և պարտադիր վճարների դրույքաչափերում.
- հնարավորություն տրվեց Հանձնաժողովին մրցույթի միջոցով ներգրավելու անկախ աուդիտորների, որոնք իրենց մատուցած ծառայությունների համար վճարվելով հանձնաժողովի կողմից, հաշվետու կլինեն վերջինիս՝ բացառելով աուդիտի իրականացման ընթացքում կարգավորվող անձանց միջամտությունը կամ ներգործությունը.

- ամրագրվեցին իրավասու մարմինների և կարգավորվող անձանց կողմից Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կարգավորումներ, այդ թվում՝ հստակ ժամկետներ.
- ամրագրվեց դիմում-բողոքների և հաղորդումների արդյունավետ և համակողմանի քննարկման հստակ ընթացակարգ.
- նախատեսվեցին Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթներով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկմանն ուղղված կարգավորումներ, որոնք հաշվի են առնում կարգավորվող ոլորտներին բնորոշ առանձնահատկությունները, խիստ մասնագիտացված բնույթ կրող հարցերի համակողմանի քննության անհրաժեշտությունը, հանրային ծառայություններից օգտվող սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռմանը միտված մեխանիզմները և այլն.
- պարզեցվեց լիցենզիա ունեցող անձի լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման գործարքների համաձայնեցման գործընթացը և այլն:



Վարչարարության պարզեցում և գործարար միջավայրի բարելավում



Վարչարարության պարզեցումն ու գործարար միջավայրի բարելավումը՝ որպես պետության որդեգրած քաղաքականություն, մշտապես գտնվել է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Այդ ուղղությամբ հանձնաժողովի նշանակալի արձանագրումներն են.

- Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում լիցենզավորման ընթացակարգերի և ռեժիմների պարզեցումը (պահանջվող փաստաթղթերի քանակի կրճատում, լիցենզավորումից ծանուցումների անցում), լիցենզավորման ժամկետների կրճատում (հեռահաղորդակցության բնագավառում լիցենզիայի տրամադրման համար նախատեսված ժամկետը 6 ամսից կրճատվեց 23 աշխատանքային օրվա).
- Էլեկտրական էներգիայի արտադրական հզորությունների կառուցման (վերականգման) և արտադրության լիցենզիաների միավորումը, էներգետիկայի բնագավառում լիցենզավորման և սակագների սահմանման ժամկետների կրճատումը (էներգետիկայի բնագավառում փոքր վերականգնվող էներգաարտադրող կայանների լիցենզավորման և սակագների սահմանման ժամկետը 60 օրից կրճատվեց 25 աշխատանքային օրվա), լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցման ժամկետների կրճատումը.

- հեռահաղորդակցության ոլորտի լիցենզիոն տուրքերի, ինչպես նաև մարզային բնակավայրերում անլար հասանելիության լայնաշերտ ցանցերի համար նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների նվազեցումը (օրինակ՝ ըստ գործունեության իրականացման աշխարհագրական վայրերի լիցենզիոն տուրքերը 500 000 – 3 000 000 դրամից նվազեցվել են մինչև 100 000 – 500 000 դրամ)։
- կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցման կարգավորումների պարզեցումն ու հստակեցումը։
- կարգավորվող անձի կատարած իրավախախտման համար նախատեսված տույժերի կիրառման համաչափության ապահովումը (կարգավորվող ոլորտներում տույժերի կիրառման միասնական մոտեցման ապահովում)։





Սպառողների շահերի պաշտպանություն



Սպառողների իրավունքների պաշտպանությունը Հանձնաժողովի սահմանադրաիրավական մանդատից բխող առանցքային լիազորություններից է: Այդ ուղղությամբ Հանձնաժողովի գործունեության արդյունքում, այդ թվում՝ կարգավորվող ոլորտներում մատակարարման և օգտագործման կանոնների և այլ իրավակարգավորումների ընդունմամբ՝

- կարգավորվող ոլորտներում գործում են շուրջօրյա հեռախոսակապի ծառայություններ, որոնց միջոցով սպառողները հնարավորություն ունեն ստանալու մատուցվող ծառայությունների քանակի, արժեքի, պլանային և արտապլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ներկայացնելու իրենց դիմում-բողոքները: Սպառողների դիմում-բողոքներին առավել արդյունավետ և արագ արձագանքման նպատակով թեժ գիծ է գործարկվել նաև Հանձնաժողովում.
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում գործում է բաժանորդներին տույժերի վճարման ավտոմատացված համակարգեր.

- գործում է էլեկտրական էներգիայի մրցակցային մատակարար ընտրելու կամ որպես որակավորված սպառող մեծածախ շուկայից ինքնուրույն էլեկտրական էներգիան գնելու հնարավորություն,
- տրվել են մատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի դեպքում ինչպես տվյալ հասցեում փաստացի բնակվող անձի, այնպես էլ նոր իրավատիրոջ իրավունքները երաշխավորող իրավական լուծումներ.
- մեկ միասնական պայմանագրում ներառվեց սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման գործընթացները
- գործում է օպերատորների կողմից մուտքային և ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն (վերծանումներ) տրամադրելու հստակ կանոնակարգ.
- միջազգային ռոումինգ ծառայություններ մատուցողների համար գործում է ռոումինգ օպերատորների ցանցերում գործող սակագների և պայմանների, ինչպես նաև հաշվեկշռի վերաբերյալ բաժանորդներին անվճար տեղեկացման պարտավորություն.
- բաժանորդների կանխավճարային և հետվճարային հաշիվների համալրման, վերալիցքավորման քարտերի վաճառքի և հանրային էլեկտրոնային

հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման դեպքում միջնորդ կազմակերպությունները (օրինակ, TellCell, Idram, EasyPay և այլն) կրում են հավելավճարներ չգանձելու պարտավորություն.

- շարժական բջջային կապի օպերատորները կրում են շարժական կապի հեռախոսասարքերի և պլանշետների ապակոդավորման պարտավորություն.
- Երևան քաղաքում պահպանվում է ջրամատակարարման շարունակականության ապահովման ցուցանիշը (միջին տևողությունը՝ 23.1 ժամ), իսկ սպասարկման տարածքի մյուս բնակավայրերում՝ 2017 թվականի համեմատ 2021 թվականին աճը կազմում է շուրջ 4 ժամ՝ մինչև 20.7 ժամ միջին տևողությամբ: Ընդ որում, եթե նախկինում կային համայնքներ, որոնք ջրամատակարարում էին ստանում երկու օրը մեկ անգամ՝ սահմանափակ ժամերով, ապա ներկայում մատակարարը պարտավոր է ժամը 7:00–24:00–ն ընկած ժամանակահատվածում բաժանորդին ապահովել ամենօրյա առնվազն 6–ժամյա ջրամատակարարմամբ.
- ներդրվել է սպառողների շահերը պաշտպանող ոլորտային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված՝ Հանձնաժողովի բյուջեից ֆինանսավորման մեխանիզմ:



Պետական բյուջե մուտքեր



2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հանձնաժողովը ՀՀ պետական բյուջե ապահովվել է շուրջ 123 միլիարդ դրամի մուտք, որից՝

- **շուրջ 105 միլիարդ դրամի մուտքը՝ ռադիոհաձախականությունների ռեսուրսի տրամադրման և օգտագործման գծով:**

Ընդ որում, մինչև 2006 թվականը ռադիոհաձախականությունների տրամադրման և օգտագործման վճարների մասով **պետական բյուջե մուտքեր չեն ապահովվել:** 2006–2021 թվականներին ռադիոհաձախականությունների օգտագործման վճարի գծով տարեկան մուտքերը 1 միլիարդ դրամից հասցվել են շուրջ 8 միլիարդի՝ էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման, նոր տեխնոլոգիաների ներդրմանն ու ծառայությունների հասանելիության ընդլայնմանն ուղղված՝ ռադիոհաձախականությունների ռեսուրսի արդյունավետ տնօրինման արդյունքում:

- **շուրջ 1,3 միլիարդ դրամի մուտքը՝** էլեկտրակայանների՝ լիցենզիոն պայմաններով ամրագրված ժամկետներում չգործարկման, կառուցման ժամանակահատվածի երկարաձգման, ինչպես նաև համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերի ներկայացման ժամկետի երկարաձգման համար **երաշխիքային գումարի գանձման գծով.**
- **շուրջ 5,6 միլիարդ դրամի մուտքը՝** լիցենզիոն սուրքերի գծով.
- **շուրջ 501 միլիոն դրամի մուտքը՝** կիրառված տուգանքների գծով.
- **շուրջ 10,5 միլիարդ դրամի մուտքը՝** կարգավորման պարտադիր վճարների գծով:

Ներդրումներ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում



Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում Հանձնաժողովի իրականացրած կանխատեսելի և ձկուն կարգավորման, այդ թվում՝ կատարված ներդրումների երաշխավորված վերադարձ ապահովող սակագնային քաղաքականության, պարզ և հստակ խաղի կանոններ սահմանող իրավակարգավորումների շնորհիվ, հնարավոր եղավ՝

- Էներգետիկայի բնագավառում ապահովել **ավելի քան 1.5 տրիլիոն դրամի** ներդրումներ.
- Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ապահովել **ավելի քան 640 միլիարդ դրամի** ներդրումներ:

Ներդրումները կրում են շարունակական բնույթ:





Միջազգային համագործակցություն



Հանձնաժողովի՝ որպես անկախ մասնագիտացված մարմնի, կայացման և հանրային ծառայությունների ոլորտի կարգավորումը միջազգային առաջավոր փորձին համահունչ իրականացնելու գործում մեծ է միջազգային դոնոր գործընկերների դերն ու աջակցությունը:

Այս առումով հատկանշական է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ներդրումը հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացման, այդ թվում՝ աշխատակազմի վերապատրաստման, խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև տեխնիկական աջակցության առումով:

Հանձնաժողովի գործունեության տարբեր փուլերում համապատասխան աջակցություն տրամադրվել է նաև Համաշխարհային բանկի (WB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) և այլ հեղինակավոր կառույցների կողմից:

Միջազգային առաջավոր փորձի ներդրման առումով հատկանշական արձանագրումներից են՝

- 1997 թվականից Կենտրոնական/Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ-երկրների կարգավորող մարմինների ընկերակցությանը անդամակցությունը,
- 2000 թվականից Կենտրոնական/Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի կարգավորող մարմինների ստեղծած Կենտրոնական/Արևելյան Եվրոպայի կարգավորողների տարածաշրջանային ասոցացի-

ային (ERRA-ին) անդամակցությունը, որի 15 հիմնադիր անդամներից է եղել Հանձնաժողովը. ներկայումս կառույցին անդամակցում են շուրջ 50 երկրների կարգավորող մարմիններ,

- 2019 թվականից՝ համաշխարհային ջրային ասոցացիային (WAREG-ին) անդամակցությունը.
- դիտորդ-երկրի կարգավիճակով EU Energy Community-ի կարգավորող մարմինների ղեկավարների խորհրդի, գազի, էլեկտրական էներգիայի աշխատանքային խմբերին մասնակցությունը,
- 2012 թվականից ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբին (EaPeReg), որպես հիմնադիր, լիիրավ անդամակցությունը, որի շրջանակում մասնակցում է միջազգային ռոումինգի, կարգավորող մարմինների անկախության ամրապնդման, լայնաշերտ ինտերնետի զարգացման ու ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբերում, ինչպես նաև համագործակցում «ԵՄ հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության հետ: Հարկ է նշել, որ հանձնաժողովն իր ակտիվ ներգրավվածությամբ և արդյունավետ գործունեությամբ պայմանավորված՝ ստանձնել է EaPeReg ցանցի 2022 թվականի նախագահությունը,
- 2014 թվականից ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից վերջինիս տարբեր աշխատանքային խմբերին, կոմիտեերին մասնակցությունը և դրա շրջանակում ծա-

վալուն փաստաթղթերի մշակման և ընդունման գործընթացին ներգրավվումը,

- փոխըմբռնման և համագործակցության երկկողմ հուշագրերի կնքումը Ուկրաինայի հաղորդակցության և տեղեկատվայնացման պետական կարգավորման ազգային հանձնաժողովի (NCCIR), Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի (CTU), Լատվիայի Հանրապետության հանրային ծառայությունների հանձնաժողովի (PUC), Լեհաստանի հանրապետության էլեկտրոնային հեռահաղորդակցության գրասենյակի (UKE) հետ,
- Հայաստան-Վրաստան միջպետական առևտրի խթանմանն ուղղված Վրաստանի կարգավորող մարմնի հետ համագործակցությունը,
- Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ համագործակցությունը, որի շրջանակում յուրաքանչյուր տարի հաստատվում են համատեղ աշխատանքային ծրագրեր, կազմակերպվում փոխայցեր:


Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «G5 Benchmark» փորձագիտական հաշվետվությունում Հայաստանի Հանրապետությունը, որպես հեռահաղորդակցության ոլորտի 5-րդ սերնդի համագործակցային և թիրախային կարգավորում իրականացնող, ԱՊՀ տարածաշրջանում ստացել է ամենաբարձր գնահատականը:

Էլեկտրաէներգետիկական համակարգ

Էլեկտրական էներգիայի առաքում՝
7.391,2 մլն կՎտժ,
հզորությունը՝ 4.073,6 ՄՎտ



Մուտք ԲԷՑ
6.804,2 մլն կՎտժ



Ներկրում՝ 368 մլն կՎտժ
Արտահանում՝ 995,2 մլն կՎտժ

ՄՊԱՌՈՒՄԸ
6.212,5 մլն կՎտժ




Ինքնավար էներգաարտադրողների՝
փոխհոսքերով մատակարարված
էլեկտրական էներգիայի քանակը՝
73,9 մլն կՎտժ,
հզորությունը՝ 136 ՄՎտ



Բաշխման համակարգ
(ներքին սպառում)
6.658,5 մլն կՎտժ

- 1) Բաշխման ցանցին միացված բաժանորդների քանակը՝ 1 066 750, որից՝
 - ա) բնակչություն՝ 982 877, այդ թվում՝ սոցիալապես անապահովներ՝ 93 088
 - բ) այլ բաժանորդներ՝ 83 873
- 2) Հաղորդման ցանցին միացված բաժանորդների քանակը՝ 20
- 3) Կորուստները բարձր լարման ցանցերում՝ 1,6%
- 4) Կորուստները բաշխիչ ցանցում՝ 6,7%

Գազամատակարարման համակարգ



- 1) Բաժանորդների բանակը՝ 754.878, որից՝
 - ա) բնակչություն՝ 736.883, այդ թվում՝ սոցիալապես անապահովներ՝ 66.826
 - բ) այլ բաժանորդներ՝ 17.995
- 2) Կորուստներ + սեփական կարիքների համար բնական գազի ծախսը՝ 4,28%

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ



833 000 Մբիթ/վրկ

Միջազգային տարանցիկ «ԱՅՖԻ» հոսքերի (IP Transit) թողունակություն



190

Ինտերնետ ծառայություն մատուցող



3

Ճարժական կապի օպերատոր

ԵՄԳՂՄՈՒՊԹ ԾՈՒԹԱՍԵՆՑԻՆՑԻ ԿՏԳՂԴՅՏՐԿ

2.14 էկզաբայթ

Ամրակցված (ֆիքսված) լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները

0.21 էկզաբայթ

Ճարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները

3 309 658

Ինտերնետ բաժանորդների ընդհանուր քանակը

2 674 304


Ճարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ

466 621

Ամրակցված (ֆիքսված) լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ


Շարժական (բջջային) կապի հասանելիություն 100 % բնակավայրերում

3G ծածկույթ 100 % բնակավայրերում




● USU Հայաստան ● Յուբոն ● Տելեկոմ Արմենիա

4G+/LTE Advanced ծածկույթ 100 % բնակավայրերում



● USU Հայաստան ● Յուբոն ● Տելեկոմ Արմենիա

Անրակցված լայնաշերտ կապի հասանելիություն 100 % բնակավայրերում



● Անլար լայնաշերտ ինտերնետ
 ● Լարային լայնաշերտ ինտերնետ, որից
 ● Օպտիկամանրաթելային տեխնոլոգիա

Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգ

